Այբ դպրոց

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021-2022

ուսումնական տարի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խոսք. Դավիթ Սահակյան 4

Պատմություն, առաքելություն, արժեքներ 8

Կրթական միջավայր և բարեկեցություն 18

Կառուցվածք և կառավարում 26

«Արարատյան բակալավրիատ» կրթական ծրագիր 30

«Այբ» համայնք և մարդիկ 50

Դպրոցի կյանքը 78

Ֆինանսական հաշվետվություն 98

«Այբ» կրթական հիմնադրամ 100

Բարերարներ 108

10-րդ սերնդի խոստովանությունը «ԱՅԲ»-ին

Ես այսօր չեմ ուզում ասել շնորհակալություն քեզ, «Ա՛յբ»: Ես այսօր ուզում եմ ասել՝ ապրե՛ս, «Ա՛յբ»:

Ապրե՛ս, «Ա՛յբ», որ ձեռքիցս բռնել, քաշել ես ներս, հետո տվել շատ հանձնարարություններ, նախագծեր ու ընկերներ: Սկզբում ես ուզում էի ուղղակի բաց թողնել քո նարնջագույն ձեռքը ու հեռանալ քեզնից. դու ինձ համար բարդ էիր, ես քեզ դժվարությամբ էի կարդում, բայց հիմա սրտիս խորքից ասում եմ քեզ՝ ապրե՛ս, «Ա՛յբ», որ ինձ հավատացել ես, ապրես, որ չես թողել փախչել քեզնից, որ ինձ կերտել ես որպես մի «այբուկ», որը քո լույսն ամենուր է տարածելու:

Ապրե՛ս, որ ծնվել ես, կեցցե՛ն քո այբեցիները, որոնք քեզ համար ծնող են դարձել, և նորից ապրես դու, որ հիմա էլ նույնն ես անում նրանց համար:

Դու Տան զգացումն ես տալիս, «Ա՛յբ», բայց դու ոչ թե երկրորդ տուն ես, այլ սեր, որը ոմանց համար առաջինն էր: Եվ սա էր իմ խոստովանությունը. դու ինձ սեր բացատրել էլ սովորեցրիր, փաստորեն:

Սիրում եմ քեզ, «Ա՛յբ», ուզում եմ, որ շատ ապրես ու մեծանաս:

Շնորհակալություն լինելու և ամենալավը լինելու համար, «Ա՛յբ»:

Քո՝ 10-րդ սերունդ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Անցած ուսումնական տարին մեկնարկեցինք մեծ սպասումով, որ աշխարհը պատած համավարակով ու մեր հայրենիքին բաժին հասած պատերազմով սկիզբ առած անորոշությունն ու անկայունությունը կմնան անցյալում: Սակայն զարգացումները եկան ապացուցելու, որ անորոշությունն ու անկայունությունը դառնում են ձևավորվող աշխարհակարգի ու մոտ ապագայի հիմնական նկարագրերը: Այս իրողությունն է՛լ ավելի է կարևորում «Այբ»-ի սերնդակերտման առաքելությունը և ապագայամետ գործունեությունը: Կրթությունը անորոշության պայմաններում պարտավորված է լինել առավել ստեղծարար և անկայունության ժամանակ՝ առավել ճկուն: Նման ժամանակներում ի հայտ է գալիս յուրաքանչյուր դպրոցի իրական նշանակությունը. այն այլևս չի կարող բավարարվել լոկ գիտելիքի փոխանցմամբ, այլ պետք է զբաղվի իր բուն առաքելությամբ՝ մարդակերտմամբ՝ արժեքների վրա հիմնված, դեպի ապագա ուղղված, սովորեցնելով սովորել, գործել ու պատասխանատվություն ստանձնել:

Այս տողերը գրելիս հասկանում եմ, որ գրում եմ ինձ ու ինձ նման չափահասների համար: Մենք՝ մեծերս, սիրում ենք սովորեցնել, տարբերակել ճիշտն ու սխալը և այդ ամենը հիմնավորել մեր անցած ճանապարհով ու փորձով: Մենք գիտենք, թե ինչ է կայունությունը, ինչ է դժվարությունը, ինչն է հնարավորն ու անհնարինը: Բայց երեխաների համար անհնարին բան չկա, քանզի նրանք չգիտեն, թե ինչն է հնարավոր և ինչն՝ անհնար: Մեզ համար սովորական դարձած այսօրվա աշխարհը երեխաների համար արդեն անցյալ է: Մեզ համար անորոշ ու դրանով իսկ երբեմն սպառնալիք նախանշող ապագան երեխաների համար պայծառ է, հետաքրքիր, կանչող ու հնարավորություններով լի: Եվ եթե մի պահ ինքդ քեզ հետ անկեղծ լինես, կտեսնես, որ ապագայի հետ առերեսվելու հարցում երեխաները հաճախ առավել պատրաստ են ու համարձակ: Ու եթե անորոշությունն ու անկայունությունը հասնում են այն ծավալների, որ գործելը դառնում է անհնար, ապա լուծումը նորից երեխա դառնալն է՝ առանց սահմանափակող փորձի, ազատ մտքի թռիչքով, անսահման ստեղծարարությամբ, վստահությամբ ու լավատեսությամբ:

Սովորաբար հաշվետվության ուղերձում փորձում ես ընդգծել տարվա ամենակարևոր նվաճումները: Այդ հատվածը բաց կթողնեմ. ամենը հաշվետվությունում կա: Կընդգծեմ ամենակարևորը՝ երեխաների ամենակարողությունն ու ոգու տոկունությունը: Երբ մեզ համար ամեն բան անորոշ է, երեխաները նախագծում են սարք, հաղթում մրցույթում և ուղարկում այն տիեզերք, որոշում են բժշկական դիմակներից վառելիք ստանալ, կյանքի են կոչում մտահղացումն ու հայտնվում հեղինակավոր մրցույթի եզրափակիչում՝ աշխարհի լավագույն տասը կրթօջախների հետ, ու այս շարքը կարելի է երկար շարունակել: Իրենց գործերով, որոնց իրական նշանակությունը նրանք հավանաբար չեն էլ գիտակցում, երեխաները իմաստավորում են դպրոցի առաքելությունն ու նշանակությունը, ոգևորում են բարերարներին, որոշակիացնում ապագան ու կայունության հիմք ստեղծում ոչ միայն դպրոցի հետ առնչվող մարդկանց, այլև լայն հասարակության համար:

Դպրոցում աշխատելը մեծ պարգև է, քանզի ամեն օր վառվռուն աչքերում տեսնում ես ապագան և մասնակցում դրա կերտմանը: Դպրոցը միավորում է բոլորիս՝ աշակերտ թե շրջանավարտ, ուսուցիչ թե աշխատակից, ծնող թե բարերար, և իր գոյությամբ իմաստավորում յուրաքանչյուրիս այսօրը:

Դավիթ Սահակյան
«Այբ» դպրոցի գործադիր տնօրեն



©Մերի Գրիգորյան
11-րդ դասարան

«ԱՅԲ». ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ, ԱՐԺԵՔՆԵՐ

«Այբ» դպրոցը բացվել է

2011 թվականին

«Այբ» կրթական հիմնադրամի կողմից՝ կրթության գաղափարի շուրջ միավորված տասնյակ բարերարների ֆինանսական աջակցությամբ, ովքեր սեփական ձեռքբերումներն ու հաջողությունները համարում են որակյալ կրթության արդյունք և կամենում միասնական ու համակարգված ներդրումներով ստեղծել բարձրորակ կրթական միջավայրեր:

«Այբ» դպրոցի բացման օրը՝ 2011 թ.-ին, մեր դպրոցաշինության ծրագիրն իր շուրջ համախմբել էր 40 բարերար և աջակից:

Այսօր ավելի քան

650 անհատ

աշխարհի տարբեր անկյուններից միավորվել է «Այբ»-ի շուրջ, որը վերածվել է գաղափարակիցների մի ամբողջ շարժման՝ հանուն հայ երեխաների ապագայի:

ԵՌԱՍՏԻՃԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ



«Այբ» դպրոցը **ոչ առևտրային կազմակերպություն է** և գործում է հիմնադրամի կարգավիճակով (իրավաբանորեն գրանցված է որպես «Այբ կրթական հանգույց» հիմնադրամ): Դպրոցը կառավարվում է հոգաբարձուների խորհրդի կողմից: «Այբ»-ը չունի սեփականատերեր և բաժնետերեր:

«ԱՅԲ» ԱՎԱԳ ԴՊՐՈՑԸ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Աշակերտների

75%-ից ավելին

ամեն տարի ստանում է ուսման վարձի փոխհատուցում

«Այբ»-ի կրթաթոշակային համակարգը թույլ է տալիս երեխաներին սովորել ավագ դպրոցում՝ անկախ ընտանիքի ֆինասական հնարավորությունից:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

- ուսյալ, սեփական ակունքներին հաղորդ և ապագայի պատասխանատվությունվստանձնող սերունդների ձևավորում

ՆՊԱՏԱԿ

- լինել 21-րդ դարի հայկական դպրոցի օրինակելի միջավայր և նպաստել հայկական կրթության մրցունակության մեծացմանն ամբողջ աշխարհում:

ՆՇԱՆԱԲԱՆ

ԻՄԱ ԵՎ ԱՐԱ

Գրաբարից թարգմանաբար նշանակում է՝ «Իմացիր և արարիր»: Ճանաչողության և գործերի ներդաշնակեցումը տեսականի և գործնականի ճիշտ համադրությունը կամ հավասարակշռությունը մեր կրթական փիլիսոփայության «ոսկե կանոնն» է:

«ԱՅԲ» ՀԱՄԱՅՆՔ

«Այբ»-ի ամենամեծ հարստություններից մեկը նրա արժեքների և սկզբունքների շուրջ համախմբված մարդիկ են: Միավորելով կրթությամբ կայացած և կրթության մեջ ներդրում կատարելու ցանկություն ունեցող մարդկանց՝ «Այբ»-ն այսօր աշխարհով մեկ սփռված վառ անհատների համայնք է, ովքեր պատասխանատվություն են ստանձնել՝ նոր սերնդին կրթությամբ իրագործվելու հնարավորություն տալու:

478
աշակերտ

473
շրջանավարտ

Ավելի քան
650
բարերար

118
մանկավարժ

1000-ից
ավելի ծնող

ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ



©Յուլիա Մարտիրոսյան
10-րդ դասարան

Երկար տարիներ աշխատելով Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի և Հարվարդի համալսարանի առաջատար ճարտարապետների ու գիտնականների հետ՝ մենք որոնել ենք այն գաղափարական միջավայրը, որը համահունչ է մեր կրթական փիլիսոփայությանը: Մենք ձգտել ենք ստեղծել այնպիսի կրթական տարածություն, որը համակում է ապագայի հասանելիության զգացումով, բացում մարդու ներուժը՝ տրամադրելով սովորելու ու արարելու: «Ստորակետ» ճարտարապետական ստուդիայի բացառիկ նախագծային լուծումները մարմնավորում են «Այբ»-ի կրթական գաղափարը:

«ԱՅԲ» ԴՊՐՈՑԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐՈՒՄ

ՈՍԿԵ ԴԻՊԼՈՄ

BUILD SCHOOL PROJECT 2019

1-ԻՆ ԿԱՐԳԻ ԴԻՊԼՈՄ

Проект Россия 2019

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼ

WAF 2019
(World Architecture Festival)

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Բնագիտական լաբորատորիաներ

Ֆուտբոլի և վոլեյբոլի խաղադաշտեր, կանաչապատ գոտիներ

Նվագախմբի սենյակ

Աշխատանքային գոտիներ

Ֆաբլաբ և լեգոլաբ

«Այբ» դպրոցը համալրված է ստեղծագործ գաղափարների իրականացմանն անհրաժեշտ ժամանակակից տեխնոլոգիաներով, որպեսզի մեր աշակերտները համաքայլ ընթանան արագորեն զարգացող գիտությանը և իրական ժամանակում փորձարկեն ու բացահայտեն ստացած գիտելիքները:

Արվեստի ստուդիաներ

Ճաշարաններ

Միջոցառումների համերգային դահլիճ և ամֆիթատրոն

Պարի ստուդիա

Մարզադահլիճներ

Գրադարաններ

ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ

«Այբ» դպրոցը խարսխված է ազգային, համամարդկային ու քրիստոնեական արժեքների հիմքի վրա:

«Այբ» դպրոցն իր արժեքահեն գործունեությունը ծավալելիս մշտապես ձգտում է ապահովել կրթական միջավայր, որտեղ պաշտպանված է յուրաքանչյուր անձի սոցիալական, հոգևոր, հոգեբանական, հուզական և ֆիզիկական բարեկեցությունը, և ստեղծված են ինքնադրսևորման, առողջ սոցիալական կապերի, ներդաշնակ փոխգործակցության, համակեցության համար նպաստավոր պայմաններ:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

«Այբ» դպրոցի բարձրագույն կառավարման մարմինը հոգաբարձուների խորհուրդն է: ՀԽ-ում ներգրավված են մարդիկ, որոնք անշահախնդրորեն իրենց ժամանակը, գիտելիքն ու փորձը ներդնում են ապագան կրթությամբ վերափոխելու այբական առաքելության իրագործման մեջ: Կառավարման այս ձևաչափը երաշխավորում է կառավարման փոխանցելիություն, թափանցիկություն և մասնակցայնություն: ՀԽ կազմում ներկայացուցիչներ ունեն բարերարների, ուսուցիչների և շրջանավարտների համայնքները:

Ներկայիս գումարման ՀԽ կազմը ձևավորվել է **2021 թվականի դեկտեմբերին** և պաշտոնավարելու է երկու տարի:

Ռուբեն Հարությունյան

«Այբ» դպրոցի ՀԽ նախագահ, HENDERSON նորաձևության տան հիմնադիր և նախագահ

Աշոտ Մկրտչյան

«Վիզա Կոնկորդ» ընկերության գործադիր տնօրեն

Արսեն Գալստյան

«Տաշիր Մեդիկա» ՍՊԸ-ի կառավարող գործընկեր և գլխավոր գործադիր տնօրեն

Արտավազդ Մինասյան

Krisp և 10Web ստարտափների համահիմնադիր

Դավիթ Փախչանյան

«Այբ» կրթական հիմնադրամի համահիմնադիր

Իրինա Գեյկո

«ՎԷՄ» կրթամշակութային հիմնադրամի ՀԽ անդամ

Լիլիթ Մինասյան

«Այբ» դպրոցի հասարակագիտական առարկայախմբի ղեկավար, պատմության ուսուցիչ

Սարգիս Բադալյան

«Luys Barry» ընկերության հիմնադիր

Վասկեն Յակուբյան

«ՀԲԸՄ Հայաստանի» նախագահ

Տիգրան Հարությունյան

«Միկշին»շինարարական և արտադրական կազմակեպության հիմնադիր նախագահ

Ռիմմա Անանյան

«Այբ» շրջանավարտների ակումբի նախագահ



Գայանե Խաչատրյան
11-րդ դասարան

«ԱՅԲ» ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆՆԵՐ

Դավի Սահակյան

Գործադիր տնօրեն

Մերի Հովսեփյան

Ակադեմիական տնօրեն

Աննա Ակոպյան

Համայնքի գծով տնօրեն

Աննա Ակոպյան

Հիմնական դպրոցի տնօրեն

Հայկ Պողոսյան

Գործառնական տնօրեն

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Արարատյան
բակալավրիատ

«Այբ» դպրոցում ուսումնառությունն իրականացվում է միջազգային ճանաչում ունեցող հայալեզու «Արարատյան բակալավրիատ» կրթական ծրագրով, որը մշակել է «Այբ» կրթական հիմնադրամը՝ **համագործակցելով Քեմբրիջի համալսարանի Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի և Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի հետ:**

•Մեծ Բրիտանիայի ճանաչման և համեմատության ազգային գործակալությունը **(UK NARIC)** ճանաչել է «Արարատյան բակալավրիատ» հայալեզու կրթական ծրագիրը որպես բրիտանական խորացված մակարդակներին **(GCE A Levels)** և ամերիկյան **Advanced Placement-ին (AP)** համազոր: Սա նշանակում է, որ հայ երեխաները Հայաստանում իրենց մայրենի լեզվով ստանում են միջազգային ամենաբարձր չափանիշներին համապատասխան կրթություն, որը մրցունակ է համաշխարհային մակարդակով և իր որակով չի զիջում լավագույն այլ կրթական հարթակներին:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ Է ՏԱՐԵՑՏԱՐԻ

19

երկրի

149

համալսարան

ճանաչել է ԱԲ դիպլոմը եւ/կամ ուսումնառության առաջարկ արել ԱԲ շրջանավարտներին



Մեծ Բրիտանիա-36
ԱՄՆ-57
Ավստրիա-3
Բելգիա-1
Գերմանիա-15
Էստոնիա-1
Իսպանիա-3
Իտալիա-1
Լիտվա-1
Կանադա-4
Ճապոնիա-1
Նիդեռլանդներ-10
Շվեյցարիա-2
Չեխիա-1
Ռուսաստան-1
Ֆրանսիա-6
Քաթար-2
Իռլանդիա-2

2021-2022 ուստարում
«Այբ»-ի աշակերտների

17%-ն

ընդունվել է արտասահմանյան բուհեր

80%-ը

տեղական բուհեր

SORBONNE UNIVERSITÉ	KU LEUVEN	WISCONSIN UNIVERSITY OF WISCONSIN–MADISON
GLION INSTITUTE OF HIGHER EDUCATION	UCR University College Roosevelt	RUTGERS UNIVERSITY | NEW BRUNSWICK
ASU Arizona State University	KIT Karlsruher Institut für Technologie	
UFAR UNIVERSITÉ FRANÇAISE EN ARMÉNIE	Yerevan State University 1919	ՀՃՀԱՀ
1921	Yerevan State Medical University after Mkhitar Heratsi	AUA Հայաստանի Ամերիկյան Համալսարան

«ԱՅԲ» ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ

	ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ	ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ
Հայագիտական առարկաներ	Մայրենի խոսքի մշակույթ	Հայոց լեզու Գրականություն Մայրենի
Օտար լեզուներ	Անգլերեն Ռուսերեն Գերմաներեն	Անգլերեն Ռուսերեն Ֆրանսերեն Իսպաներեն Գերմաներեն
Ճշգրիտ գիտություններ	Մաթեմատիկա Համակարգչային գիտություն Ինֆորմատիկա	Հանրահաշիվ Երկրաչափություն Մաթեմատիկա (5-6-րդ դասարաններ) ՏՀՏ Ինֆորմատիկա
Բնագիտական առարկաներ	Գիտություն	Կենսաբանություն Քիմիա Ֆիզիկա Աշխարհագրություն Բնագիտություն

Հասարակագի-տական առարկաներ		Հայոց պատմություն Համաշխարհային պատմություն
Արվեստներ	Կերպարվեստ Երաժշտություն Պարարվեստ Տեխնոլոգիա	Ազգային Պար Երաժշտություն Կերպարվեստ
Ֆիզիկական պատրաստություն	Մարմնակրթություն Շախմատ	Մարմնակրթություն
Խմբակներ	Գիտություն Շախմատ Հմուտ Ձեռքեր Սպորտային խաղեր Պար Ընթերցանության ակումբ (ռուսերեն) Շյուղագործություն Drama Club Լեգո լաբ	Շյուղագործություն Սպորտային խաղեր Շախմատ Լեգո լաբ Կավագործություն Drama Club Պատմություն Բասկետբոլի խմբակ "Русский медвежонок" Գիտություն (քիմիա, կենսաբանություն, ֆիզիկա) Մաթեմատիկա (օլիմպիական խմբակ) Քիմիա (օլիմպիական խմբակ) Կենսաբանություն (օլիմպիական խմբակ) Ֆիզիկա (օլիմպիական խմբակ)

«ԱՅԲ» ԱՎԱԳ ԴՊՐՈՅՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Հայագիտական առարկաներ	Հայոց լեզու Հայ գրականություն Հայոց պատմություն
Միջազգային լեզու	Անգլերեն
Մարմնակրթություն և նախնական զինվորական պատրաստություն (ՆԶՊ)	Մարմնակրթություն ՆԶՊ[1]
Մաթեմատիկա	Մաթեմատիկա[2] (վիճակագրություն, հավանականություն) և երկրաչափություն
Բնագիտական առարկաներ[3]	Ֆիզիկա Քիմիա Կենսաբանություն
Հասարակագիտական առարկաներ	Համաշխարհային պատմություն Գործարարություն
Օտար լեզուներ	Ռուսերեն Ֆրանսերեն Գերմաներեն Իսպաներեն

[1]Նախնական զինվորական պատրաստության դասընթացն իրականացվում է ուսումնառազմական բանակմամբ:
[2]Համատեղ հավաստագրվում է նաև Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի կողմից:
[3]Համատեղ հավաստագրվում է նաև Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի կողմից:

Արվեստ	Տեսողական արվեստ Բեմարվեստ Ազգային պար Երգչախումբ Նվագախումբ
Նախագծային ուսումնառություն (ակումբներ)	«Արվեստանոց» ակումբ Ինժեներական ակումբ «Կաքավագիր» ակումբ «Ռոքեստր» ակումբ «Ստվերների թատրոն» ակումբ «Փոդքաստինգ» ակումբ Ֆիլմարտադրության ակումբ «Մեդիագիտակներ» ակումբ Վավերագրական թատրոն «Ֆ8» լուսանկարչության ակումբ Ծրագրավորման ակումբ

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ

«ՍՈՎՈՐԵԼ ԱՆԵԼՈՎ»

«Սովորել անելով» սկզբունքի վրա է հիմնված «Արարատյան բակալավրիատ» կրթական ծրագրի կարևոր բաղադրիչներից մեկը՝ նախագծային ուսումնառությունը (project-based learning): ՆՈՒ ակումբներում աշակերտներն իրականացնում նախագծեր, որոնք ուղղված են իրական համայնքային խնդիրների լուծմանը:

2021-2022 ուստարում նախագծային ակումբների աշակերտների համար կազմակերպվեցին

- նախագծային մտածողության դասընթացներ
- նախագծերի կառավարման դասընթացներ
- մարկետինգի և SMM-ի դասընթացներ

2021-2022 ուստարում ձևավորվեցին նախագծային ուսումնառության 11 ակումբներ, իրականացվեց ընդհանուր 12 նախագիծ

1

Ինժեներական ակումբ

2

«Ստվերների թատրոն» ակումբ

«Արվեստանոց» ակումբ

3

Ֆիլմարտադրության ակումբ

4

5

«Կաքավագիր» ակումբ

«Ռոքեստր» ակումբ

6

«Վավերագրական թատրոն» ակումբ

7

8

«Ֆ8» լուսանկարչական ակումբ

«Մեդիագիտակներ» ակումբ

10

Ծրագրավորման ակումբ

9

11

Փոդքաստինգի ակումբ

ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԸ

1. Ինժեներական ակումբ

«Այբ»-ի ինժեներների հաջողությունը «տիեզերական» էր. **Ad Astra թիմը** հաղթեց Ա. Քեմուրջյանի անվան համաերիտասարդական տիեզերքի մրցույթում, և նրանց նախագծած սարքը որպես մրցույթի հաղթող կուղարկվի տիեզերք:

2. «Ստվերների թատրոն» ակումբ

Ակումբի անդամները ստեղծեցին ուսումնական 3 ներկայացումներ, որոնք ցուցադրեցին Չորաթան գյուղի փոքրիկներին՝ նրանց հյուրընկալելով դպրոցում:

3. «Արվեստանոց» ակումբ. CinemArt նախագիծ

«Արվեստանոցի» աշակերտները ժամանակակից հայկական ֆիլմերի համար ստեղծեցին պաստառներ ու կազմակերպեցին ցուցահանդես ՀԲԸՄ կենտրոնում:

4. Ֆիլմարտադրության ակումբ. «Թաքնված գանձերի հետքերով» նախագիծ

«Արվեստանոցի» աշակերտները ժամանակակից հայկական ֆիլմերի համար ստեղծեցին պաստառներ ու կազմակերպեցին ցուցահանդես ՀԲԸՄ կենտրոնում:

5. «Կաքավագիր» ակումբ. «Պարի պատարագ» նախագիծ

Այբեցիներն ուսումնասիրեցին պարի գրառման համակարգը և կաքավագրերով ինքնուրույն գրառեցին 10 պար՝ ամփոփելով դրանք «Պարագրաֆ» գրքույկում: Շնորհանդեսը տեղի ունեցավ Նարեկացի» արվեստի միությունում:

6. «Ռոքեստր» ակումբ. «Երաժշտաքարտեզ» համերգ-նախագիծ

Աշխարհի երաժշտության յուրօրինակ քարտեզ կազմեցին այբեցի ռոքերները: «Երաժշտաքարտեզ» խորագրով համերգ-շնորհանդեսը տեղի ունեցավ Հ. Թումանյանի անվան տիկնիկային թատրոնում:

6. «Ռոքեստր» ակումբ. «Երաժշտաքարտեզ» համերգ-նախագիծ

Աշխարհի երաժշտության յուրօրինակ քարտեզ կազմեցին այբեցի ռոքերները: «Երաժշտաքարտեզ» խորագրով համերգ-շնորհանդեսը տեղի ունեցավ Հ. Թումանյանի անվան տիկնիկային թատրոնում:

7. «Վավերագրական թատրոն» ակումբ. «Խլացնող լռություն» ներկայացում

Ակումբի անդամները Գ. Սունդուկյանի անվ. ազգային ակադեմիական թատրոնի «Փոքր բեմում» 2 անգամ խաղացին «Խլացնող լռություն» խորագրով վավերագրական ներկայացումը:

8. «Ֆ8» լուսանկարչական ակումբ. «Հենց ինքնանկար» նախագիծ

«Ֆ8»-ցիները տարեցներին սովորեցրին «սելֆի» անել: Տատիկների և պապիկների 13 ինքնանկարների ցուցահանդեսը տեղի ունեցավ դպրոցում:

9. Ծրագրավորման ակումբ. կամավորների հավաքագրման հարթակի նախագծում

Աշակերտները ստեղծեցին հարթակի ցուցադրական տարբերակ, որտեղ կամավորները կկարողանան գտնել կամավորների կարիք ունեցող ընկերություններ:

10. «Մեդիագիտակներ» ակումբ

Ակումբի աշակերտները ստեղծեցին հոդվածներ մեդիագրագիտության մասին՝ ներկայացնելով մեդիա ոլորտում առկա խնդիրները:

11. Փոդքաստինգի ակումբ. «Ես դեռահաս եմ» և «Ես ուզում եմ դառնալ» նախագծեր

«Այբ»-ի փոդքաստերները թողարկեցին «Ես դեռահաս եմ» և «Ես ուզում եմ դառնալ» հաղորդաշարերը, որոնք հրապարակվեցին Zleenk կրթական հարթակում: Նախագծի շնորհանդեսը տեղի ունեցավ Լոռու COAF կենտրոնում:

ԱՅԲԱՊԱՏՈՒՄ 2021-2022

Անցկացվեց հետևյալ համայնքների դպրոցների հետ

1. **ՆԵՐՔԻՆ ԾԱՂԿԱՎԱՆ**
   Տավուշի մարզ
2. **ՆԵՐՔԻՆ ԿԱՐՄԻՐԱՂԲՅՈՒՐ**
   Տավուշի մարզ
3. **ՋԱՌԻԹԱՓ**
   Վայոց ձորի մարզ
4. **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ**
   Գեղարքունիքի մարզ

Այբեցիներն այցելեցին գործընկեր մարզային դպրոցներ, վարեցին «դասեր» ու ներկայացրին նախագծեր, բնակվեցին հյուրընկալ համայնքներում:

Այս տարի երկամյա ընդմիջումից հետո համայնքային դպրոցների աշակերտներին հյուրընկալեցին նաև այբական ընտանիքները:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ

Մասնագիտական կողմնորոշման բաժինը ավագ դպրոցի աշակերտների համար կազմակերպեց հանդիպում-խորհրդակցություններ հայաստանյան և միջազգային բուհերի ներկայացուցիչների հետ:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ ԱՌԿԱ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑԱՆ

9 միջազգային համլսարանների ներկայացուցիչներ

Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի կրթական խորհրդատուներ

«ՍՈՎՈՐՈՒՄ ԵՄ ԱՇԽԱՏԵԼՈՎ»

փորձնակության տոնավաճառ 2022

Երկու տարվա հիբրիդային ձևաչափից հետո դպրոցում անցկացվեց-2022 թ. «Սովորում եմ աշխատելով» փորձնակության տոնավաճառը:

ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

- «Այբ» ավագ դպրոցի աշակերտները,
- Շրջանավարտները,
- «Այբ» կրթական հիմնադրամի հիբրիդային կրթության ծրագրի մասնակիցները

ՄԱՍՆԱԿԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

34 կազմակերպություն

21 մասնագիտական սեմինար

130 մասնակից

«ԱՅԲ» ՀԱՄԱՅՆՔ ԵՎ ՄԱՐԴԻԿ

ԾՆՈՂՆԵՐ

Մենք ծնողին համարում ենք երեխայի ուսման, դաստիարակության ու զարգացման գործում դպրոցի առաջին համագործակից: Ծնողներն ակտիվորեն մասնակցում են դպրոցի կրթական, հասարակական ու ժամանցային զանազան միջոցառումներին ու նախաձեռնություններին:

Մեծ ուրախություն է մեր ծնողներին տեսնել նաև «Այբ» դպրոցի բարերարների թվում, ովքեր կարևոր ու շատ գնահատելի ֆինանսական ներդրում են ունենում «Այբ»-ի ընդլայնման ու զարգացման գործում՝ այդպիսով նպաստելով ոչ միայն սեփական երեխայի, այլև նրանից հետո եկող սերունդների համար ուսումնական լավագույն պայմանների ապահովմանը:

«ԱՅԲ»-Ի ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ ԵՆՔ

**Շքամուտքի ծածկի կառուցում
Հարվածային գործիքների, աշակերտական պահարանների, դահլիճի լուսավորման միջոցների ձեռքբերում, ընդհանուր օգտագործման տարածքների ձայնամեկուսացում**

ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

«Այբ»-ի առանցքում աշակերտն է՝ ուսյալ, առաքինի և պատասխանատու: Մեր աշակերտներն ակտիվ մասնակցում են ուսումնական գործընթացի բոլոր բաղադրիչներին: Նրանք նաև «Այբ» դպրոցը սովորելու, ապրելու, ուսումնասիրելու և ընկերներ ձեռք բերելու ոգեշնչող վայր են դարձնում:

Մենք օգնում ենք յուրաքանչյուր աշակերտի՝ բացահայտելու և զարգացնելու սեփական ուժեղ կողմերը և դպրոցից դուրս գալիս վստահ լինելու սեփական կարողություններին: Մենք խրախուսում ենք նրանց հետևելու իրենց հետաքրքրություններին ու նպատակներին գիտական ոլորտներում, սպորտում և արվեստում:

«Այբ»-ի աշակերտի նկարագրի ութ սկզբունքները հիմնված են հին հունական փիլիսոփայությունից եկած և քրիստոնեության մեջ ամրագրված չորս մարդկային առաքինությունների վրա, որոնք են խոհականությունը, արիությունը, ողջախոհությունը և արդարությունը: Յուրաքանչյուր առաքինություն մենք բացել ենք իր տեսական-ճանաչողական և գործնական-վարքային իմաստներով՝ ստանալով չորս զույգ կամ ութ սկզբունք:

«Այբ»-ի աշակերտի նկարագրի

ՈՒԹ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Այս ութ սկզբունքներն են «Այբ»-ում կրթական գործընթացների, համընդհանուր բարեկեցության, անձի ձևավորման, միջանձնային ու համայնքային հարաբերությունների հիմքում:

1. ՃԱՆԱՉՈՂ
2. ԶԳՈՆ
3. ԱՐԱՐՈՂ
4. ՀԱՎԱՍԱՐԱ ԿԾՌՎԱԾ
5. ԲԱՑ
6. ՀՈԳԱՏԱՐ
7. ԲԱՐԵԽՈՀ
8. ՆԱԽԱՁԵՌՆՈՂ

2021-2022 ուստարում ունեցանք

478 ԱՇԱԿԵՐՏ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ 2021-2022

36 աշակերտ — ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ

16 աշակերտ — ՀԻՄԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ
լրացուցիչ ընդունելությամբ

29 աշակերտ — ԱՎԱԳ ԴՊՐՈՑ
արտաքին ընդունելությամբ

31 աշակերտ — ԱՎԱԳ ԴՊՐՈՑ
ներքին ընդունելությամբ

23 աշակերտ
«Այբ» հիմնական դպրոցից

8 աշակերտ
ԴԿԴ-ից

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ

ԱՎԱԳ ԴՊՐՈՑ
162 աշակերտ

ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ
162 աշակերտ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ
154 աշակերտ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՍԵՌԻ

205

273

ԱՆՎՃԱՐ ԿԵՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶԵՐԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԲԸՄ Հայաստանի և «Այբ» դպրոցի երկարատև գործակցության շնորհիվ ավագ դպրոցի **23 աշակերտ** անվճար կեցության հնարավորություն ստացավ ՀԲԸՄ «Վահե Կարապետյան» կենտրոնում:

ՀԲԸՄ «Վահե Կարապետյան» կենտրոնում բնակվող աշակերտներն ըստ մարզերի



ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Առողջ կրթական միջավայրի ձևավորման, արդյունավետ ուսումնառության կազմակերպման, «Այբ»-ի հաջողության և կայացման գրավականներից են նաև մեր ուսուցիչները: Մեր ուսուցչական անձնակազմում են բարձր որակավորում ունեցող կրթության մասնագետներ, փորձագետներ, ուսումնական ոլորտների ղեկավարներ, դասագրքերի հեղինակներ, հետազոտողներ, արվեստի և սպորտի վաստակավոր գործիչներ:

«Այբ»-ը ոչ միայն սովորեցնելու, այլ նաև սովորելու կրթական միջավայր է: Եվ մեր ուսուցչական անձնակազմը պարբերաբար անցնում է վերապատրաստումներ, հետևում կրթական համաշխարհային միտումներին՝ համադրելով դրանք ազգային կրթության առանձնահատկությունների և արժեքների հետ:

«Այբ» դպրոցի

30 ուսուցիչ

ՈՒՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ

Մինչև այժմ մեր ուսուցիչները հեղինակել են

33 թեզ

41 գիրք

329 գիտահետազոտական հոդված

41 ուսումնամեթոդական հրապարակում

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆՈՒՅԹԻ

171 ուսուցիչներ և աշխատակիցներ

- **53** ադմինիստրատիվ աշխատակից
- **118** մանկավարժական անձնակազմ
  - **94** ուսուցիչ
  - **24** մանկավարժ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ ԱՆՑԱՆ

ԴՊՐՈՑԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՆՈՐ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

UCL

ՄԵՐԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԱՆՆԱ ԱԿՈՊՅԱՆ

«Կրթության կիրառական կառավարման և առաջնորդության» արվեստի մագիստրոսի դիպլոմ

«Դպրոցի կառավարում և առաջնորդություն» դասընթացի վկայական

ՍԻԼՎԻԱ ՆԱՋԱՐՅԱՆ

HARVARD UNIVERSITY

МОСКОВСКАЯ ШКОЛА ПРОФЕССИОНАЛЬНОЙ ФИЛАНТРОПИИ

ԴԱՎԻԹ ՍԱՀԱԿՅԱՆ

«Ոչ առևտրային կազմակերպության կառավարում» ծրագրի մասնագիտական վերապատրաստման վկայական

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ի նպաստ Հայաստանի կրթության զարգացման

Մեր թիմը մասնակցեց Տավուշում պետական չափորոշիչի ներդրման ծրագրին:

Իրականացրինք՝

- Տավուշի ուսուցիչների վերապատրաստում և մենտորություն,
- մասնագիտական զարգացման ծրագիր՝ մարզի դպրոցների տնօրենների և փոխտնօրենների համար:

«ԱՅԲ»-Ի 5-ՐԴ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Մասնակցեց

120

ուսուցիչ
(«Այբ» դպրոց և ԴԿԴ)

Սեմինար վարեցին

17

ուսուցիչ

Հրավիրյալ միջազգային բանախոսներ

- **Եղիա Չափարյան,** հոգեթերապիայի և ոչ բռնի հաղորդակցման մասնագետ
- **Չարբել Նասեր,** մշտարթունության մասնագետ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գագիկ Գինոսյանը, Հարություն Բաղդասարյանը, Անի Գինոսյանը ելույթներ ունեցան «Կարին» խմբի մենահամերգում:

Մարի Ադամյանի կտավը ցուցադրվեց Նկարիչների միության «Սալոն-2021» ցուցահանդեսում:

Տեղի ունեցավ Վարդան Մկրտչյանի «Բեթհովեն, ես լսում եմ» ֆիլմի շնորհանդեսը:

Անահիտ Պապայանն ու Աննա Արզումանյանը ելույթներ ունեցան Կոմիտասի ձայնասկավառակի շնորհանդես համերգում, Դանիել Երաժշտի, Երվանդ Երկանյանի հոբելյանական համերգներում:

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ

Մեր շրջանավարտները դպրոցի կենսունակության անբաժան և ամենակարևոր մասնիկներից մեկն են: Նրանք «Այբ»-ի ապագայի տեսլականի վառ ապացույցն են, որոնք դեռ նոր են ծիլեր նետել մեր հասարակության մեջ և նոր են սկսում ծաղկել՝ վարակելով շրջապատին իրենց արժեհամակարգով և ապագայի նկատմամբ հստակ պատկերա.ցումներով ու ձգտումներով:

Դպրոցի 11-ամյա պատմության ընթացքում «Այբ»-ը տվել է

473 **շրջանավարտ**
(2022 թ. հուլիսի դրությամբ)

Այսօր նրանք սովորում են Հայաստանի և արտերկրի հեղինակավոր բուհերում՝ բարձր պահելով դպրոցի անունը և «Այբ»-ի շրջանավարտի պատվավոր կոչումը: Իսկ առաջին շրջանավարտներից շատերն արդեն իրենց հստակ տեղն են զբաղեցնում աշխատաշուկայում, ինչպես նաև՝ հիմնում են սեփական ընկերությունները: «Այբ»-ի շրջանավարտները դպրոցն ավարտելուց հետո շարունակում են ակտիվ մասնակցել «Այբ» համայնքի կյանքին՝ մասնակցելով դպրոցի և հիմնադրամի կողմից իրականացվող մի շարք նախաձեռնությունների, ինչպես նաև համալրելով «Այբ»-ի կառույցների անձնակազմի շարքերը:

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱԿՈՒՄԲ

2021 թվականին կազմավորվեց «Այբ»-ի շրջանավարտների ակումբը, գրանցվեց որպես հասարակական կազմակերպություն, ձևավորվեց խորհուրդը և ընտրվեց ակումբի նախագահը:

ԱԿՈՒՄԲԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆ Է՝

- ստեղծել սերունդների փոխօգնության ամուր շղթա,
- նպաստել փորձի և արժեքների փոխանակմանը,
- սատարել շրջանավարտների կայացմանն ու զարգացմանը,
- միավորել շրջանավարտների համայնքը դպրոցի և «Այբ» գաղափարի զարգացման շուրջ:

«ԱՅԲ»-Ի ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱԿՈՒՄԲԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

- Զարգացնել շրջանավարտների համայնքը և խթանել նրանց կապը դպրոցի հետ
- Իրականացնել մենտորություն և լինել ավագ ընկեր կրտսեր շրջանավարտների համար
- Հնարավորություն ընձեռել շրջանավարտներին անձնական և մասնագիտական աճի, համատեղ նախագծերի և գործունեության համար
- Ստանձնել սոցիալական պատասխանատվություն «Այբ» համայնքի և հասարակության նկատմամբ

«ԱՅԲ»-Ի ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱԿՈՒՄԲԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ռիմմա Անանյան

Ակումբի նախագահ

Լիլիթ Միերյան

Ակումբի խորհրդի նախագահ և
2016 թ. շրջանավարտների ներկայացուցիչ

Հայկ Խեկոյան

2015 թ. շրջանավարտների
ներկայացուցիչ

Սերգեյ Բարսեղյան

2013 և 2014 թթ.
շրջանավարտների
ներկայացուցիչ

Արմեն Բարսեղյան

2017 թ. շրջանավարտների
ներկայացուցիչ

Քնար Օհանջանյան

2018 թ. շրջանավարտների
ներկայացուցիչ

Մարիամ Մելքումյան

2019 թ. շրջանավարտների
ներկայացուցիչ

Սևակ Մեսրոպյան

2020 թ. շրջանավարտների
ներկայացուցիչ

Վարուժան Մկրտչյան

2021 թ. շրջանավարտների
ներկայացուցիչ

ՄԵՆՏՈՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Մենտորության ծրագիրն «Այբ»-ի գաղափարական հիմնաքարերից մեկն է: Այն մեկնարկել է 2013 թ.-ին, երբ դպրոցն ավարտեցին «Այբ»ի առաջին սերնդի 17 շրջանավարտները:

Հիմնադիր բարերարները, որոնք իրենց հռչակեցին դեռ գոյություն չունեցող դպրոցի շրջանավարտներ, կամավոր ստանձնեցին ավագ ընկերոջ դերը և մենտորություն են իրականացնում արդեն 10-րդ սերնդի շրջանավարտների համար: 2019 թ.-ին նրանց շարքերը որպես մենտոր համալրեցին «Այբ» դպրոցը 5 և ավելի տարի առաջ ավարտած շրջանավարտները՝ հիմք դնելով սերունդների միջև շարունակական փոխկապակցվածությանը:

ԱՅՍՕՐ ՈՒՆԵՆՔ

75 մենտոր շրջանավարտ

19 մենտոր բարերար

ԴՊՐՈՑԻ ԿՅԱՆՔԸ

ՏԱՐՎԱ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

«Այբ» դպրոցը դարձավ SAT քննական կենտրոն

achieve more

SAT

Առարկայական օլիմպիադաներում մեր աշակերտները նվաճեցին

19
դիպլոմ
մարզային փուլում

15
դիպլոմ
հանրապետական փուլում

12
գովասանագիր

«Այբ»-ը՝ The Earth Prize 2022 մրցույթի եզրափակիչում: «Ռենեմասկ» նախագծով մրցեցինք 114 երկրի 516 դպրոցների 650 թիմի հետ:

Diamond Challenge միջազգային մրցույթում զբաղեցրինք 3-րդ տեղը «Ռենեմասկ» նախագծով:

Ինժեներական ակումբի Ad Astra թիմը՝ Քեմուրջյանի անվան համաերիտասարդական տիեզերքի մրցույթի հաղթող: Մեր աշակերտների նախագծած սարքն ուղարկվեց տիեզերք:

Ֆիլմարտադրության ակումբի «Արցախ. եռաձայն պայքար» ֆիլմաշարը՝ «Ռոլան» մանկապատանեկան ֆիլմերի միջազգային 17-րդ փառատոնի մրցանակակիր:

Շրջանավարտ Սարգիս Սիմոնյանի գունանկարը՝ Teen Art Awards-ի հաղթող

Մերի Բարեղամյանը՝ Global Atomic Quiz միջազգային կրթական մրցույթի հաղթող:

Էմմա Հովսեփյանը՝ Երիտասարդական գրականագիտական մրցույթի հաղթող

Լիլի Թովմասյանը՝ Հայաստանի փաուերլիֆտինգի առաջնության հաղթող

Մարգարիտա Տեր-Գրիգորյանը՝ Խնկո Ապոր անվ. ազգային մանկական գրադարանի տարվա լավագույն ընթերցող

Թադե Մուրադյանը՝ «Կենգուրու 2022» միջազգային մաթեմատիկական մրցույթում լավագույն արդյունք գրանցող

Հաղթանակներ ու մեդալներ QSI-ում թեթև աթլետիկայի մրցումներից

Մարմնակրթության ուսուցիչ Կարեն Հովհաննիսյանը՝ Ուժային եռամարտի Եվրոպայի առաջնության չեմպիոն

Հրապարակվեց «Գրատոն» ամենամյա թերթը՝ հայագիտական առարկայախմբի նախաձեռնությամբ

Հրատարակվեցին «Այբ»-ի աշակերտներ Արամ Բարսեղյանի «Անմահների պատերազմը» և Քսենյա Մուրադյանի «Պատերազմասեր» գրքերը

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Այբ» դպրոցը փորձի փոխանակման սեմինարներ կազմակերպեց Թաթարստանի **«Իննոպոլիս» լիցեյի** և Մոսկվայի **«Լետովո»** դպրոցի ադմինիստրատիվ և ուսուցչական անձնակազմերի համար:

Մոսկվայի շրջանի կրթության նախարարության նախաձեռնությամբ «Այբ» դպրոցն անցկացրեց փորձի փոխանակման գործնական սեմինարներ Մոսկվայի շրջանի մեկ տասնյակ դպրոցների տնօրենների համար: Պատվիրակությունը ղեկավարում էր Մոսկվայի շրջանի կրթության փոխնախարար Ելենա Միխայլովան:

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ. ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ

Krisp և 10Web ընկերությունների աջակցությամբ ավագ դպրոցի 13 աշակերտ մասնակցեցին Climate Uturn ծրագրին, մշակեցին իրական խնդիրներ լուծող 7 էկոլոգիական նախագիծ

Մոսկվայի թ. 1578 դպրոցի հետ անցկացրինք առցանց աշակերտական մշակութային և սոցիալական նախագծեր:

ԿՅԱՆՔԸ՝ «ԱՅԲ»-ՈՒՄ

Գիտելիքի օրը Գիտավանում

Տաղանդների շոու 2022՝
ավագ դպրոց

Տաղանդների շոու 2022՝
միջին դպրոց

Տոնական նվերներ
Արյունաբանական կենտրոնի
երեխաներին

Հայաստանի անկախության 30-ամյակ

Ամանորը «Այբլանդիայում»

Արվեստների շաբաթ 2022

Մասնակցություն
աշակերտական
բնագիտական փառատոնին

Շախմատի պարային ներկայացում՝
4-րդ դասարանցիների կատարմամբ

Մոլորակը «Այբ»-ում

Ի ՀԻՇԱՏԱԿ

Լևոն Հովսեփյան

Մարզադահլիճի անվանակոչում ի պատիվ 2020 թ. շրջանավարտ Լևոն Հովսեփյանի

Սամվել Դովլաթյան

Վիկտոր Ակուլյան

Ծառատունկ ի հիշատակ «Այբ»-ի բարերարներ ու մենտորներ Սամվել Դովլաթյանի և Վիկտոր Ակուլյանի

ՆՇԵՑԻՆՔ

Ժպիտի օրը

Կերպարների օրը

Սուրբ Սարգսի տոնը

Տյառնընդառաջը

Բուն բարեկենդանը

Բանակի օրը

Երկրի օրը

Գիրք նվիրելու տոնն ու Թումանյանական շաբաթը

Մասլենիցան՝ 1-5-րդ դասարանցիների մասնակցությամբ

Մայրիկատոնը՝ ջերմ ու լուսառատ հանդիպումներով

«ԱՅԲ»-ՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՆ

Եվրոպական երիտասարդական պառլամենտի գիտաժողովը

Նկարիչ Գարրի Զուխի «Արվեստի շաբաթօրյակ»-ը

«Ինքնություն և արժեքներ» հանդիպում-քննարկումների շարքը

Դավիթ Յանի «Հաջողության բանաձևը»

Սպորտի միջազգային օրվա առթիվ պանելային քննարկում-ասուլիսը

Սպորտլանդիա՝ միջին դպրոցի աշակերտների ու Հաշմանդամների «Փյունիկ» միության երեխաների հետ

Երկրաշարժի ուսումնական վարժանք

4-րդ դասարանի ավարտական հանդիսությունը

9-րդ դասարանի ավարտական հանդիսությունը

10-րդ սերնդի Վերջին զանգը

Ավարտական հանդիսությունը

Մենտորության ծրագրի արարողությունը

ՀՅՈՒՐԲՆԿԱԼԵՑԻՆՔ

Արցախի ԿԳ նախարար Լուսինե Ղարախանյանին և Արցախի նախագահի խորհրդական Ազատուհի Սիմոնյանին

ՀՀ շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանին ու փոխնախարար Աննա Մազմանյանին

Աստղաֆիզիկոս, «Ստարմուս» փառատոնի հիմնադիր Գարիկ Իսրայելյանին

ServiceTitan-ի համահիմնադիր Վահե Կուզոյանին

Բասկետբոլի հավաքականի գլխավոր մարզիչ Ռեքս Կալամյանին

Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիայի շահառուներին

Աշակերտների՝ Սյունիքից, Գեղարքունիքից, Տավուշից, Արմավիրից

ՏԱՍՆՅԱԿ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

Պրիմակովի անվան գիմնազիայից (ՌԴ)

Սուրբ Դիմիտրիևյան դպրոցից (ՌԴ)

Ռուսաստանյան առաջատար կրթական կազմակերպությունների ղեկավարներ, կրթության ոլորտի մասնագետներ

Մոսկվայի Էկոնոմիկայի բարձրագույն դպրոցից

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Հունաստանում ՀՀ դեսպան
Տիգրան Մկրտչյանի հետ



Ամենամսյա հանդիպում-զրույցներ
Տեր Մեսրոպ քահանա
Արամյանի հետ

Բիոինժեներ Արթուր
Գալանտերյանի հետ

Ցեղասպանագետ
Արա Քեթիբյանի հետ

Գրող Արտավազդ
Եղիազարյանի հետ

«Այբ» կրթական
հիմնադրամի գործադիր
տնօրեն Սոնա Կոշեցյանի հետ

Դերասան Սերգեյ
Սարգսյանի հետ

Ֆուտբոլիստ Գևորգ
Ղազարյանի հետ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ*

Գործառնական բյուջե	2021-2022
Գործառնական գործունեությունից ներհոսք	**1,154,382,242**
Ներհոսք ուսման վարձերից	**998,234,915**
«Այբ» կրթական հիմնադրամի նվիրատվություններ դպրոցի դեֆիցիտի ծածկման համար (կրթաթոշակային ֆոնդ)	**101,378,076**
Նպատակային և կանոնադրական նպատակների համար նվիրատվություններ	**25,459,132**
Ներհոսք ենթակառուցվածքներից և ծառայությունների մատուցումից	**28,378,930**
Աշակերտներին վերաբերող այլ մուտքեր	**931,188**
Գործառնական գործունեությունից արտահոսք	**1,061,302,098**
Վարչական ծախսեր	**358,335,257**
Վարչական անձնակազմի ծախսեր, այդ թվում՝ աշխատավարձային ֆոնդ, սոցիալական փաթեթ և վարչական աշխատողների զարգացման ծախսեր	**252,438,579**
Կոմունալ ծախսեր, դպրոցի գույքի և շրջակա միջավայրի պահպանում և բարեկարգում	**70,808,557**
Դպրոցի SS համակարգի պահպանում և բարելավում	**12,967,251**
Մարքեթինգ, հաղորդակցություն և ֆոնդահայթայթում	**3,828,111**
Մասնագիտացված ծառայությունների արտապատվիրում	**6,986,795**
Գրասենյակային, ներկայացուցչական ծախսեր և այլ վարչական ծախսեր	**11,305,964**
Կրթական գործընթացի ուղղակի ծախսեր	**696,827,487**
Ուսուցիչների և կրթական գործընթացին աջակցող անձնակազմի աշխատավարձային ֆոնդ	**462,152,874**
Աշակերտների ծախսեր (գրականություն, սնունդ, տրանսպորտ, կացություն, ծրագրային ծախսեր, լող և այլն)	**233,183,057**
«Այբ» համայնքին ուղղված միջոցառումների ծախսեր	**1,491,556**
Այլ նախագծերի ուղղակի ծախսեր	**6,139,354**

Ներդրումային բյուջե	
Ներդրումային գործունեությունից ներհոսք, այդ թվում՝ կապիտալ, շինարության և վերանորոգման, հիմնական միջոցների ձեռքբերման նպատակով ստացված նպատակային նվիրատվություններ	**0**
Ներդրումային գործունեությունից արտահոսք՝ այդ թվում նոր շինարարություն և կապիտալ վերանորոգում, սարքավորումների, և այլ հիմնական միջոցների ձեռքբերում	**71,162,686**

Ֆինանսական բյուջե	
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ներհոսք՝ այդ թվում ներդրված ավանդներից տոկոսագումարներ և նախկինում տրամադրված փոխառությունների հետվերադարձ	**24,390,408**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների արտահոսք՝ այդ թվում ստացված վարկերի փոխառությունների մարում և փոխառությունների տրամադրում	**24,094,411**

Սկզբնական մնացորդ 2021թ սեպտեմբերի 1-ի դրությամբ	**95,380,098**
Ընդամենը ներհոսք	**1,178,772,650**
Ընդամենը արտահոսք	**1,156,559,195**
Վերջնական մնացորդ 2022թ օգոստոսի 31-ի դրությամբ	**117,593,553**

***Ֆինանսական հաշվետվությունը ներկայացված է դրամական միջոցների հոսքի ձևաչափով: Թվերը բերված են ՀՀ դրամով:**

Այբ
կրթական հիմնադրամ

«Այբ» կրթական հիմնադրամի առաքելությունն է մարդկանց կյանքը կրթությամբ վերափոխելը՝

- ստեղծելով որակյալ, բազմակողմանի, օրինակելի կրթական համակարգ,
- միավորելով կրթության առաջնահերթությունը գիտակցող մարդկանց,
- ձգտելով կերտել կիրթ և բարձր բարոյական արժեքներ ունեցող սերունդներ,
- զարգացնելով կրթությանն աջակցող մարդկանց հայաստանյան և համաշխարհային ցանց,
- ձևավորելով կրթության մեկենասության համակարգ:

Այս գաղափարների ու նպատակների շուրջ «Այբ»-ը ձևավորել է ուժեղ համայնք, և «Այբ»-ի համահիմնադիր ութ երիտասարդների՝ 2006 թվականին սկիզբ առած երազանքն ու գործն այսօր վերածվել է կրթական հզոր շարժման՝ Հայաստանում և նրա սահմաններից դուրս:

ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ՇԱՀՈՒՅԹ ՉՀԵՏԱՊՆԴՈՂ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑ Է

Համագործակցելով աշխարհի ամենահեղինակավոր կրթական հաստատությունների՝ Քեմբրիջի համալսարանի, Լոնդոնի համալսարանական քոլեջի, Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի, Հարվարդի համալսարանի և այլ բուհերի հետ, ստեղծում է որակյալ կրթություն ստանալու հնարավորություն բոլորի համար: Գործունեության 16 տարիներին հիմնադրամը ստեղծել ու ներդրել է Հայաստանում ժամանակակից լավագույն կրթական չափանիշներին համապատասխանող և միջազգային լայն ճանաչում ունեցող հայալեզու «Արարատյան բակալավրիատ» և «Այբ հիբրիդային կրթություն» ծրագրերը, հիմնադրել «Այբ» դպրոցը, Դիլիջանի կենտրոնական դպրոցը և Ազգային երգ ու պարի ակադեմիան, մշակել և հասանելի դարձրել սովորելու բազմաթիվ նորարարական ծրագրեր, տեխնոլոգիաներ և ռեսուրսներ, ներգրավել հարյուր հազարավոր երեխաներ իր կրթական մրցույթներում ու ծրագրերում:

«Այբ» համայնքում համախմբված է **650 բարերար**, որոնք մասնագիտական, ֆինանսական և ժամանակային մեծ ներդրում են կատարել կրթության զարգացման նպատակով:

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

«Այբ»-ի ներդրումները կրթության մեջ՝ ավելի քան

42 մլն

ԱՄՆ դոլար

«Այբ»–ն իր ծրագրերով աջակցում է ՀՀ ու Արցախի ավելի քան

1100

դպրոցի

դպրոցների ընդհանուր թվի

70% -ին

ՀՀ ու Արցախի դպրոցների

125.000

երեխա

(սովորողների շուրջ 30%-ը)

տարեկան ներգրավված է «Այբ»-ի տարբեր ծրագրերում

«Այբ»-ի կրթական մրցույթներին մասնակցել է ՀՀ և Արցախի

734.200

սովորող

Կրթության հավասար հնարավորություններ ստեղծելու նպատակով տեղայնացվել են

«ՔԱՆ» ակադեմիայի

որակյալ և անվճար կրթական նյութերը հայերեն

Տեսանյութեր

4.300

Հայկական հարթակի այցելուներ

782.962

«Այբ»-ի՝ մասնագիտական կարողությունների զարգացման, վերապատրաստումների և մենտորության ծրագրերում ներգրավված է ՀՀ ու Արցախի

9.000

ուսուցիչ

Դիտումներ

2.114.000

ՖՈՆԴԱՀԱՅԹԱՅԹՈՒՄ

Ֆոնդահայթայթումը յուրաքանչյուրիս գործն է, որովհետև այն բազմապատկում է ներդրումը մեր երեխաների ու մեր երկրի լավագույն ապագայի մեջ: «Այբ» կրթական հիմնադրամը հայթայթում է ֆոնդեր անհատ բարերարների ու կազմակերպությունների նվիրատվություններից, որպեսզի ստեղծված կրթական հնարավորությունները հասանելի լինեն ավելի շատ շահառուների:

Այս գաղափարն է նաև կրթաթոշակային մեր ծրագրի հիմքում:

«Այբ» կրթական հիմնադրամը ֆինանսական միջոցներ է ներգրավում, որպեսզի որևէ աշակերտ, որն ընդունվել է «Այբ» ավագ դպրոց, ֆինանսական պատճառով չզրկվի այստեղ սովորելու հնարավորությունից:

10 տարում «Այբ» կրթական հիմնադրամը փոխհատուցել է «Այբ» ավագ դպրոցի

485 աշակերտի ուսման վարձ՝

1.287.506.224 ՀՀ դրամ

Այս տարի նախորդի համեմատությամբ **47%-ով** ավելի շատ միջոցներ են ուղղվել «Այբ» դպրոցի կրթաթոշակային ֆոնդին՝ **80 012 742 ՀՀ դրամ,** որից **1 560 573 դրամը**՝ անվանական կրթաթոշակ: Նախորդ տարի ուսման վարձի փոխհատուցում է ստացել ավագ դպրոցի աշակերտների **78,2%-ը:**

Հիմնադրամի գաղափարախոսության հիմքում հայկական կրթության զարգացմանը համակարգված ներդրումներով աջակցելու գաղափարն է:

Միացի՛ր մեր համայնքին և նվիրի՛ր ապագա նոր սերնդին

ԻՆՉՊԵՍ ԱՋԱԿՑԵԼ ԴՊՐՈՑԻՆ

Մենք ունենք քո օգնության կարիքը «Այբ» դպրոցի հետագա զարգացման ու ընդլայնման համար:

ՄԻԱՑԻ՛Ր «ԱՅԲ» ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳՐԻՆ ԵՎ ԴԱՐՁՐՈ՛Ւ ԱՇԽԱՐՀՆ ԱՎԵԼԻ ԼԱՎԸ

Նվիրիր
$150
երեխաները կունենան նոր նյութեր ու սարքավորումներ գիտության դասերի համար

Նվիրիր
$600
հովանավորիր 1 տաղանդավոր երեխայի 1 ամսվա ուսումը «Այբ» դպրոցում

Նվիրիր
$6000
մեկ աշակերտ ամբողջ տարի կսովորի «Այբ»-ում հենց քո աջակցությամբ

Նվիրիր
$50,000
քո անունով կոչիր մեկ լսարան «Այբ» դպրոցի նոր մասնաշենքում

Նվիրիր
$100,000
դարձիր «Այբ» կրթական հանգույցի միջուկ-դրամագլխի բարերար՝ ստանալով արտոնություն՝ մասնակցելու որոշումների կայացմանը

Եթե ունես «Այբ» դպրոցին աջակցելու այլ առաջարկ, գրիր մեզ donation@ayb.am հասցեով, և միասին կքննարկեն ամենահարմար տարբերակը:

ԲԱՐԵՐԱՐՆԵՐ

10-րդ սերնդի երախտիքի խոսքը բարերարներին

Շնորհակալություն ենք հայտնում ձեզ, սիրելի՛ բարերարներ, մեր ինքնաճանաչողության սահմաններն ընդարձակելու հնարավորության համար, որն ընձեռված էր ամեն օր քաջալերող միջավայրի շնորհիվ: Շնորհակալ ենք արժեքային առանցքին առհավետ կապելու և այսուհետ այն ամուր պահելու որոշմանը մեզ հարազատացնելու համար: Ձեր շնորհիվ է նաև, որ այսօր սովորական բառերին՝ արժեք, համայնք, ավելացնում ենք իմաստային ընդգրկում ու խորություն:

Որպես շրջանավարտներ՝ ուզում ենք ասել, որ մեր առանցքի շուրջ ձևավորված շրջանները հավերժ տարածվելու են: Եվ այսօր մենք պատրաստ ենք ստեղծելու նոր շրջաններ՝ քաջ գիտակցելով արժեքային առանցքի կարևորությունը: Ձեր ընձեռած հնարավորությամբ այս երեք տարիների շնորհիվ է, որ այժմ ինքներս մեզ խոստանում ենք ստանձնել շրջանավարտից զատ շրջանաստեղծի պատասխանատվությունն ու խանդավառությունը և ինչ-որ մի օր գուցե դառնալ նոր առանցքներ հիմնող բարերար:

Շնորհակալ ենք:

2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ «ԱՅԲ» ԴՊՐՈՑԻ ԵՎ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ

«Ազատ» հիմնադրամ
Ալեքսանդր Դաշյան
Ալեքսանդրա Սմիրնովա
Ալիսա Հովհաննիսյան
Ալյոնա Ցիշկևիչ
Անահիտ Գևորգ Չաթալպաշյան
Անանուն բարերար
Անանուն բարերար
Անի Սարգսյան
Աշոտ Մկրտչյան
Ասպետ Փաղարյան
Արամ Փախչանյան
Արթուր Բերդ
Արտակ Հովհաննիսյան
Արտավազդ Մինասյան
Գեորգի Վոլկով
Գնել Նազանյան
Գրիգորի Արտազյան
Դավիթ Զոհրաբյան
Դիանա Պարանյան
Դմիտրի Զելենցով
Դմիտրի Մենյայլով
Դմիտրի Վոլկով

Դմիտրի Վոլկով
Դով Ռիվկին
Ելենա Բաշևա
Ելենա Գորյաչիկովա
Ելենա Մարտինովա
Եկատերինա Դմիտրիևա
Եվգենի Սանդոմիրսկի
Զիգզագ ՍՊԸ
Էլլադա Գաբրիելյան
Իգոր Խալաթյան
Իլյա Անդրեև
Հակոբ Մոմջյան
Հայկազ Ֆանյան
Հասմիկ Սահակյան
ՀԲԸՄ Հայաստան
Հմայակ Դանիելյան
Հովհաննես Իսպիրյան
Մանանա Թարփոշյան
Միխայիլ Բրանտով
Մհեր Տերտերյան
Յուրի Մուրատով
Յուրի Օվչարենկո
Նազարեթ և Նինա Ֆըսթըգճյան
Նարեկ Ասլիկյան
Նարեկ Խաչատրյան
Նոնա Սարգսյան
Նորա Երզնկյան
Պյոտր Ղազարյան
Սեդրակ Քոչարյան
Սերգեյ Սերգեև
Սերգեյ Ստեպանենկո
Սիլվա և Շի Յանգ
Սինան Սինանյան
Սոնա Կոշեցյան
Սոֆյա Օդինցևա
Վահագն Ադունց
«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ
Վիկտոր Դվորկին
Վիկտոր Ռուսալեև
Վիկտոր Վորոնցով
Տաթևիկ Ավետիսյան
Ռաֆֆի և Նինա Ֆըսթըգճյան
Օլգա Վասիլևա
Օլեգ Վիլեգժանին
Ֆաինա Լեռներ

ԲԱՐԵՐԱՐՆԵՐ. ՀԽ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Աշոտ Մկրտչյան
ՀԲԸՄ Հայաստան
Ռուբեն Հարությունյան
Սարգիս Բաղալյան
Տիգրան Հարությունյան

2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐԺԵՔԻՑ ՎԵՐԱՀԱՃՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ ՀՕԳՈՒՏ ԴՊՐՈՑԻ ՆՎԻՐԱԲԵՐԱԾ ԾՆՈՂՆԵՐ

Աբդուլնուր Ֆլորի Հաննա
Աբրահամյան Ելենա Գեորգի
Աբրահամյան Վահե Սուրիկի
Ալեքսանյան Արաքսյա Էդիկի
Այունց Արմեն Արթուրի
Առուստամյան Ալեքսանդր Պերճի
Ավետիսյան Արման Ռաֆիկի
Արամյան Էլեն Ռուդիկի
Արտազյան Միքայել Գրիգորի
Բանյան Նարինե Սարգսի
Բարսեղյան Լևոն Թելմանի
Գաբրիելյան Լուսինե Գագիկի
Գաբրիելյան Հարություն Սայադի
Գալստյան Էդգար Գագիկի
Գալստյան Նունե Սերգեյի
Գասպարյան Արթուր Համլետի
Գափոյան Գայանե Արտաշեսի
Գեղագուլյան Լիլիթ Գրիգորի
Գևորգյան Արսեն Լևոն
Գուշյան Մարինե Համազի
Գրիգորյան Համլետ Սամվելի
Դադասյան Աննա Յաշայի
Դավթյան Էլյա Վալերիի
Դավթյան Կարինե Ժորայի
Դավթյան Սաթենիկ Լյովիկի
Դարչինյան Անժել Դավիթի
Եղոյան Լիլիթ Գարեգին
Եղոյան Լիլիթ Գարեգինի
Երանոսյան Արսեն Լիպարիտի
Ճատիկյան Վահե Վարազդատի
Ճաքարյան Տիգրան Վանիկի
Էդուարդ Հովհաննիսյան Ռեպոնի
Էվանեսյան Սարգիս Միշայի
Թամրազյան Լիլիթ Աշոտի
Թևոսյան Արմինե Գևորգ
Թորոսյան Ալբերտ Ալեքսանդրի
Իսկանդարյան Կարինե Ալբերտի
Խաչատուրյան Արթուր Սերգեյի
Խաչատուրյան Ժաննա Արթուրի
Խաչատրյան Արգինե Արսենի
Խաչատրյան Գայանե Վարդանի
Խաչատրյան Կարեն Ժորայի
Խաչատրյան Մանվել Նապոլեոնի
Խաչատրյան Մարինե Գեւորգի
Ծատուրյան Իռեն Ռոմենի
Կայֆաջյան Արամ Լևոնի
Կարագուլյան Վահագն Սոսի
Կարապետյան Էդգար Գագիկի
Կարապետյան Մերի Պատվականի
Կոթողյան Լուսինե Թաթուլի
Հակոբյան Աննա Սեյրանի
Հակոբյան Առնոլդ Մեժլումի
Հակոբյան Նիկոլայ Ստեփանի
Հակոբյան Պարույր Հակոբի
Համբարձումյան Լիլիթ Պապին
Համբարձումյան Լիլիթ Պապինի

Հայրապետյան Անուշ Արամի
Հայրապետյան Աշոտ Լևոնի
Հարությունյան Արման Վլադիկի
Հարությունյան Գրիգոր Սամվելի
Հարությունյան Հասմիկ Լևոնի
Հարությունյան Մերի Էդիկի
Հարությունյան Վարդուշ Արշակի
Հովհաննիսյան Արսեն Վլադիկի
Ղազարյան Գոռ Գագիկի
Ղազարյան Դիանա Արթուրի
Ղազինյան Արթուր Գագիկի
Ղազինյան Դավիթ Գագիկի
Ղազինյան Շուշանիկ Սամվելի
Մաթևոսյան Անի Սիրազի
Մանուկյան Մերի Իշխանի
Մարգարյան Նաիրա Ֆրոնտիկի
Մարգարյան Նարեկ Վարդանի
Մելիքսեթյան Ինևա Լևոնի
Մելքումյան Շահեն Ֆելիքսի
Մինասյան Մերի Արթուրի
Մխիթարյան Աղավնի Արշակի
Մխիթարյան Գագիկ Յուրիի
Մխիթարյան Իշխան Շիրզադի
Մկրտումյան Վաղարշակ Հակոբի
Մկրտչյան Արմեն Կառլենի
Մկրտչյան Գայանե Մարտինի
Մկրտչյան Լիանա Արծրունիի
Մկրտչյան Սամվել Հեգելի
Մկրտչյան Վաղինակ Կառլենի
Մկրտչյան Վաղինակ Կարլենի
Մկրտչյան Տիգրան Արմենի
Մնացականյան Վահե Գրիգորի
Մորադյանհաջիաբադի Լիլիթ Մեջնունի
Մորադյանհաջիաբադի Համիկ Թաթավուսի
Մուսաելյան Մարինա Յուրիի
Նաջարյան Հեղինե Վլադիմիրի
Շադոյան Միքայել Ալեքսանդր
Չոփուրյան Սիրանուշ Հրայրի
Պետրոսյան Լիլիթ Սեդրակի
Պիսկուլյան Եկատերինա Կարապետի
Պողոսյան Սերինե Թովմաս
Ջիլավյան Ասյա Կառլենի
Ջիլավյան Արմեն Մկրտիչի
Սարգսյան Մարիետա Բաբկենի
Սարգսյան Ալեքսանդր Նելսոնի
Սարգսյան Անահիտ Գագիկի
Սարգսյան Արման Մանվելի
Սարդարյան Արայիկ Սամվելի
Սողոմոնյան Էմանուել Էմիլի
Սուքիասյան Տիգրան Յուրիի
Ստեփանյան Զարինե Լյուդվիգի
Ստեփանյան Վալերի Եղիշի
Ստրատան Ալյոնա Գեորգիի
Վարդանյան Գայանե Սերգեյի
Վարդանյան Իռենա Վարդանի
Վարդանյան Կարեն Հրանտի
Վարդանյան Սամվել Լյովայի
Տոնականյան Նազիկ Ֆելիքսի
Քեշաբյան Կարինե Վաղարշակի
Քեշիշյան Պետրոս Գևորգի
Քոլոյան Տաթևիկ Աղասու
Ֆարշյան Արամ Մամբրեյի

ՇՐՋԱՆԱՎԱՐՏ ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՖԻԼՄԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐ

Անահիտ Զորանյան
Անահիտ-Աննա Մկրտչյան
Անի Գրիգորյան
Անհայտ գործընկեր
Անհայտ գործընկեր
Աննա Հակոբյան
Արա Հովհաննիսյան
Արթուր Եփրեմյան
Արմեն Մարտիրոսյան
Արմինե Բաբայան
Արշակ Զաքարյան
Արտաշես Հարությունյան
Գայանե Դավթյան
Դիանա Նալբանդյան
Դիաննա Ղաբուզյան
Էդուարդ Մանուկյան
Իզաբելլա Մինասյան
Իրինա Մկրտչյան
Լիլիթ Մինասյան
Լիլիթ Միերյան
Կարինե Հովհաննիսյան
Հովհաննես Աթաբեկյան
Մարալ Լիունյան
Մարի Ադամյան
Միլենա Դանիելյան
Նարե Կարագուլյան
Նելլի Բալայան
Ռիմմա Անանյան
Ռուզաննա Հաչիկյան
Սառա Նավասարդյան
Սարգիս Բադալյան
Սևան Կաբակյան
Սոնա Կոշեցյան
Սոսե Բերբերյան
Վլադիմիր Ազնաուրյան
Տաթևիկ Ջալաթյան
Քնարիկ Սահակյան
Քրիստինե Մաիլյան

Միացի՛ր մեր համայնքին և
նվիրի՛ր ապագա նոր սերնդին

0052 Երևան, Թբիլիսյան խճ. 11/11
+374 (98) 546497
welcome@aybschool.am, press@aybschool.am
www.aybschool.am